# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1/3-01/1303
„04„ 04 2011թ.

ՀՀ, ք. Գյումրի, Վարդանանց հր. 1,
Հեռ. (+374 312), 3-46-05;
Հեռապատճեն (+374 312) 4-87-01;
Կայքը www.Gyumri.am
Էլ.փոստ- gyumri@gyumri.am

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ Ա.ԳԻԶԻՐՅԱՆԻՆ

*Հարգելի մարզպետ*

Ուղարկվում է Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի փետրվարի 4-ին կայացած N 2 նիստի NN 15 – 25 որոշումները:

Առդիր՝ 11 (տասնմեկ) թերթից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ժ/Պ Բ.ԱԼԵՔՍԱՆՈՎ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 1851-11
„04. 04 2011 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«04» փետրվարի 2011թ. Արձանագրություն N 2
ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա

### ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքի գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագծերը, քաղաքաշինության բաժնի կողմից ներկայացված հողամասերի օգտագործման սխեմաները ու ելակետային տվյալները, ինչպես նաև՝ Գյումրու քաղաքապետի 31.01.2011թ. N235-Ա որոշմամբ սահմանված հողամասերի մեկնարկային գները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գյումրու քաղաքապետի 31.01.2011թ. N235-Ա որոշմամբ աճուրդով օտարելու համար առանձնացված հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն ստորև ներկայացված Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 27.01.2011թ. N 5 արձանագրության ցուցակի:

Աճուրդով օտարման համար առանձնացված հողամասեր՝

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ տարածագնահատման գոտին | Ծածկագիրը Մակերեսը՝ քառ,մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Շիրակացի փող. 17/6<br>10-րդ գոտի | Ա11-70<br>103.22 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 270 000 |
| 2 | Շիրակացի փող. 11/19<br>10-րդ գոտի | Ա11-71<br>100.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 192 000 |
| 3 | Շչորսի փող. 4/4<br>8-րդ գոտի | Ա11-72<br>41.93 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | օժանդակ շինության կառուցում | 168 000 |
| 4 | Մնջոյան փող. 5/9<br>10-րդ գոտի | Ա11-73<br>40.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 112 000 |
| 5 | Շիրակացի փող. 5/11<br>10-րդ գոտի | Ա11-74<br>98.52 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 300 000 |
| 6 | Շիրակացի փող. 5/10<br>10-րդ գոտի | Ա11-75<br>99.52 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 300 000 |
| 7 | Խանջյան փող. 3/3<br>9-րդ գոտի | Ա11-76<br>400.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 400 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Խանջյան փող. 1/5<br>9-րդ գոտի | Ա11-77<br>400.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 400 000 |
| 9 | Շահումյան փող. 185/10<br>9-րդ գոտի | Ա11-78<br>598.72 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 1 800 000 |
| 10 | Շարա-Տալյան փող. 11/5<br>9-րդ գոտի | Ա11-79<br>360.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 080 000 |
| 11 | Սավոյան փող. 3/4<br>11-րդ գոտի | Ա11-80<br>400.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 500 000 |
| 12 | Վ.Սարգսյան 1 թաղ. 89/3<br>11-րդ գոտի | Ա11-81<br>120.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 150 000 |
| 13 | Մազմանյան փող. 18/6<br>8-րդ գոտի | Ա11-82<br>220.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 920 000 |
| 14 | Շչերբինայի փող. 8/4<br>9-րդ գոտի | Ա11-83<br>300.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 750 000 |
| 15 | «Մուշ-2» թաղ. 6/19<br>11-րդ գոտի | Ա11-84<br>144.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 216 000 |
| 16 | Նալբանդյան փող. 2/5<br>9-րդ գոտի | Ա11-85<br>231.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 690 000 |
| 17 | Կոմինտերնի փող. 2 շարք 8/2<br>9-րդ գոտի | Ա11-86<br>42.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 96 000 |
| 18 | Գարեգին Ա փող. 1 նրբ. 9/2<br>11-րդ գոտի | Ա11-87<br>389.18 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 560 000 |
| 19 | Շիրակացի փող. 78/6<br>9-րդ գոտի | Ա11-88<br>362.94 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 820 000 |
| 20 | «Մուշ-2» թաղ. 4/44<br>11-րդ գոտի | Ա11-89<br>50.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 150 000 |

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 04 » փետրվարի 2011թ. Արձանագրություն N 2

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա

### Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 36Ա ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող. N 36ա** հասցեի կիսակառույց բնակելի տան (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2296618 վկայական) շինարարական աշխատանքները ավարտելու համար պահանջվում է զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի :

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող.** N 36ա հասցեի 200.20քմ մակերեսով կիսակառույց բնակելի տունը՝ իր զբաղեցրած 378.0քմ մակերեսով հողամասով, օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գազեմա» ՍՊԸ-ի կողմից 28.12.2010թ. N 50 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 200.20քմ մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին սահմանել 4 310 000 /չորս միլիոն երեք հարյուր տաս հազար/ դրամ, իսկ 378.0քմ մակերեսով հողամասի համար՝ 1 550 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ դրամ:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Զ.ՉԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«__04__» __փետրվարի__ 2011թ. Արձանագրություն N __2__

ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N __17-Ա__

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 46Ա ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող.** N 46ա հասցեի կիսակառույց բնակելի շենքի (հիմք՝անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2296617 վկայական) շինարարական աշխատանքներն ավարտելու համար պահանջվում է զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող.** N 46ա հասցեի կիսակառույց բնակելի շենքը՝ իր զբաղեցրած 1242.0քմ մակերեսով հողամասով, օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 21.01.2011թ. N 54 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից շինության համար օտարման մեկնարկային գին սահմանել __26 700 000 /քսանվեց միլիոն յոթ հարյուր հազար/__ դրամ, իսկ հողամասի համար՝ __5 100 000 /հինգ միլիոն հարյուր հազար/__ դրամ:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ — ՁԵՌՆՊԱՀ՝ ՉԿԱ

ԴԵՄ ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«04» փետրվարի 2011թ. Արձանագրություն N 2

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 18-Ա

## Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 46Բ ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող. N 46բ** հասցեի կիսակառույց բնակելի տան (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2296621 վկայական) շինարարական աշխատանքներն ավարտելու համար պահանջվում է զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի :

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող. N 46բ** հասցեի 221.20քմ մակերեսով կիսակառույց բնակելի տունը՝ իր զբաղեցրած 483.0քմ մակերեսով հողամասով, օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 07.01.2011թ. N 51 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 221.20քմ մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին սահմանել **3 300 000 /երեք միլիոն երեք հարյուր հազար/** դրամ, իսկ 483.0քմ մակերեսով հողամասի համար՝ **1 960 000 /մեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար/** դրամ:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չ.ՔԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

---

«__04__» __փետրվարի__ 2011թ. Արձանագրություն N __2__

ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N __19-Ա__

### Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 46Գ ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող. N 46գ** հասցեի կիսակառույց բնակելի տան (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2296619 վկայական) շինարարական աշխատանքներն ավարտելու համար պահանջվում է զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի :

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող **Մ.Խորենացի փող. N 46գ** հասցեի 221.42քմ մակերեսով կիսակառույց բնակելի տունը՝ իր զբաղեցրած 483.0քմ մակերեսով հողամասով, օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2011թ. N 52 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 221.42քմ մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին սահմանել **5 500 000 /հինգ միլիոն հինգ հարյուր հազար/** դրամ, իսկ 483.0քմ մակերեսով հողամասի համար՝ **1 970 000 /մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար/** դրամ:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ջ.ՔԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 04 » փետրվարի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 2

# ՈՐՈՇՈՒՄ N 20 - Ա

## ՇԵՐԱՄ-2 ԹԱՂ. N 1-3Ա ՇԵՆՔԻ 10.17ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, Շերամ-2 թաղ. N1-3ա շենքի առաջին հարկի 10.17քմ մակերեսով (սեփականության վկայական 1139494), ոչ բնակելի տարածը (բացվածք) շենքը շահագործման օրվանից չի օգտագործվել իր նպատակային նշանակությանը և մնալով անօգտագործելի երկար ժամանակ՝ կարիք ունի վերանորոգման, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող Շերամ-2 թաղ. N1-3ա շենքի առաջին հարկի 10.17քմ մակերեսով ոչ բնակելի ազատ տարածքը (բացվածք) օտարել աճուրդային եղանակով:
2. Օտարվող 10.17քմ մակերեսով տարածքի համար, ելնելով «Գազեմս» ՍՊԸ-ի կողմից 07.02.2011թ. N 59 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, օտարման մեկնարկային գին սահմանել <u>310 000 /երեք հարյուր տասը հազար/</u> դրամ,:
3. Տարածքի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չ.ՋԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«__04__» __փետրվարի__ 2011թ. Արձանագրություն N __2__

ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N __21 - Ա__

### ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 33 ՀԱՍՑԵԻ 46.91ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում ընդգրկված, Տերյան փողոցի թիվ 33 հասցեի 46.91քառ.մ մակերեսով և 57.24քառ.մ հողամասով նախկին խանութի շենքը (սեփականության վկայական 2449996) 1988 թվականի երկրաշարժից հետո, իր նպատակին չի օգտագործվել: Երկար տարիներ մնալով անխնամ, մթնոլորտային, բնակլիմայական ազդեցությունների և այլ գործոնների պատճառով դարձել է անօգտագործելի և կարիք ունի հիմնանորոգման:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ շենքը վերականգնելու և հիմնանորոգելու համար տեղական բյուջեն միջոցներ չունի և շինությունը հիմնանորոգելու միակ տարբերակը մասնավոր ներդրումների ներգրավումն է և հաշվի առնելով ճարտարապետական արժեք ներկայացնող շինության վերականգնման անհրաժեշտությունը քաղաքի վերակառուցման գործընթացում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել Գյումրու ավագանու 10.04.2008թ. թիվ 3 որոշումը:
2. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող Տերյան փողոցի թիվ 33 հասցեի նախկին խանութի 46.91քառ.մ մակերեսով և 57.24քառ.մ հողամասով շենքը օտարել աճուրդային եղանակով:
3. Շինության համար օտարման մեկնարկային գին, ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 03.02.2011թ. N 58 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, սահմանել __290 000 (երկու հարյուր իննսուն հազար) դրամ__, իսկ հողամասի համար՝ __570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) դրամ:__
4. Շինության հիմնանորոգմանը ներկայացվող պահանջները մանրամասնել առուվաճառքի պայմանագրում:
5. Աճուրդ-վաճառքը կայանալուց հետո հուշարձանի օտարման մասին սահմանված կարգով իրազեկել հուշարձանների պահպանության պետական լիազորված մարմնին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չ.ՔԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 2

« 04 » փետրվարի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 22-Ա

### ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶ 21101 ՄԱԿՆԻՇԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ՎԱԶ21101 մակնիշի 770LL10 պետհամարանիշով ծառայողական ավտոմեքենան շահագործվել է 4 տարի, ապահովելով շահագործման նորմատիվ ժամկետը այժմ շահագործելու համար պահանջում է ամենօրյա վերանորոգում, կատարելով զգալի ծախսեր՝ պահեստամասերի ձեռքբերման և վերանորոգման համար:

Ի նկատի ունենալով վերը նշվածը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ՎԱԶ 21101 մակնիշի 2007թ. արտադրության , շարժիչ 1889415, թափք 1062455, 770LL10 պետհամարանիշով ծառայողական ավտոմեքենան օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գ-ազեմս» ՍՊԸ-ի կողմից 22.01.2011թ. N55 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից օտարման մեկնարկային գին սահմանել 1 700 000 /մեկ միլիոն յոթ հարյուր հազար/ դրամ:
3. Ավտոմեքենայի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ
Հ.ՊՈՂՈՍՅԱՆ
Գ.ԱԴԱՄՅԱՆ
Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ
Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ
Չ.ՁԱՐԳԱՐՅԱՆ
Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Մ.ՍԱՀԱԿՅԱՆ
Գ.ՂԱԶԱՐՅԱՆ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

---

« 04 » փետրվարի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 2

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 23 - Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 1 ՆԻՍՏԻ N 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2009թվականի փետրվարի 2-ի N 1 նիստի «Գյումրու քաղաքային համայնքի 2009-2013թ.թ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 7 որոշման մեջ «2013» թվերը փոխարինել «2012» թվերով:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| Հ.ՊՈՂՈՍՅԱՆ | ՉԿԱ | ՉԿԱ |
| Գ.ԱԴԱՄՅԱՆ | | |
| Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ | | |
| Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ | | |
| Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ | | |
| Մ.ՍԱՀԱԿՅԱՆ | | |
| Գ.ՂԱԶԱՐՅԱՆ | | |
| Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ | | |
| Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 2

«04» փետրվարի 2011թ.
ք.Գյումրի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 24-Ա

### ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2009թվականի հուլիսի 9-ի «Գյումրու քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի նոր կազմ հաստատելու մասին» N 10-Ա որոշման 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ «Արտյոմ Մազմանյան» բառերը փոխարինել «Բորիս Ալեքսանյան» բառերով:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| Հ.ՊՈՂՈՍՅԱՆ | ՉԿԱ | ՉԿԱ |
| Գ.ԱԴԱՄՅԱՆ | | |
| Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ | | |
| Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ | | |
| Չ.ՋԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ | | |
| Մ.ՍԱՀԱԿՅԱՆ | | |
| Գ.ՂԱԶԱՐՅԱՆ | | |
| Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ | | |
| Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

---

«__04__» __փետրվարի__ 2011թ. Արձանագրություն N _2_

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N _25-Ա_

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասերով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի ներքոհիշյալ փոփոխությունները՝
1) Քաղաքապետի ռեֆերենտի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամ:
2) Աշխատակազմի ֆինանսական բաժնի թվով երկու համակարգչի օպերատորների աշխատավարձերի դրույքաչափերը սահմանել ամսական 70000-ական /յոթանասուն հազար/ դրամ:
3) Աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնի գործակալի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 80000 /ութսուն հազար/ դրամ:
4) Աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնի համակարգչի օպերատորի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
2. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի ներքոհիշյալ լրացումները՝
1) Աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնում ավելացնել գործակալի մեկ հաստիք՝ դրույքաչափը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
2) Աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնում ավելացնել գործակալի երկու հաստիք՝ դրույքաչափերը 80000 /ութսուն հազար/ դրամ:
3) Աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնում ավելացնել համակարգչի օպերատորի մեկ հաստիք՝ դրույքաչափը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
4) Աշխատակազմի ճարտարապետական բաժնում ավելացնել համակարգչի օպերատորի մեկ հաստիք՝ դրույքաչափը 60000 /վաթսուն հազար/ դրամ:
5) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնում ավելացնել վարորդի մեկ հաստիք՝ դրույքաչափը 80000 /ութսուն հազար/ դրամ:

6) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնում ավելացնել գործավարի մեկ հաստիք՝ դրույքաչափը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
7) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնում ավելացնել էլեկտրիկի մեկ հաստիք՝ դրույքաչափը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 231-Ա որոշման 1-ին կետով հաստատված հաստիքացուցակում սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին համապատասխանող հաստիքների դրույքաչափերը:
4. Հանձնարարել ֆինանսական բաժնին /պետ Մ.Գրիգորյան/՝ բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածներում կատարել փոփոխություններ և այդ մասին տեղյակ պահել Գյումրու տեղական գանձապետական բաժանմունքին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ　　　　Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԼ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ